նուազագոյն քանակով, որովհետեւ A գօտին բացառապէս նեստորական է եւ քրդական, B գօտին դուռ քրդական, C գօտին ընակեցուած է բացառապէս լազերով:

2· Ֆրանսան ստանում է Հայաստանը, որպէս Հայաստան, եւ Ֆրանսական գօտին կը լինի հայ ազգային զգացումի կենտրոն: Այս բանը վերին աստիճանի ձեռնտու է Ռուսաստանի համար, որովհետեւ Փոքր Հայաստանի հայերը տրամադրուած են կղերականօրէն ու պահպանողական կերպով, հակառակ կովկասեան հայերի եւ անիշխանական–ընկերվարական արեւելահայերի: Եթէ հայոց ազգային զգացումի հնոցը լինէր Երզրում, անիշխանական–ընկերվարականները իրենց ձեռքը կ'առնէին ու կ'ամրացնէին բովանդակ հայկական քաղաքական մեքենան, իսկ այսպիսի հանգամանքները չափաւոր տարրերը իրենց կ'ենթարկեն Փոքր Հայաստանից բխող եւ Ֆրանսական խնամակալութեան տակ գտնուող հայոց ազգային ձգտումները:

Հայկական չափաւոր շրջանների նպատակը լի լինի զարգացումը սեփական սահմաններում եւ բաժանումը Կովկասի եւ Ատրպատականի անիշխանական–ընկերվարականներից, որոնց հետ երբեք ցանկութիւն չեն ունեցել ուծանալ միասին:

Յետոյ Ֆրանսական գօտին ընդգրկում է իր մէջ Զէյթուն, Հաճէն, Տիգրանակերտ, Մէյֆարկին, Սըվազ պատմական հայկական քաղաքները եւ մի շրջան, որը կառավարուել է հայոց վերջին թագաւորի կողմից, որին վիճակուեց մեռնելու Փարիզում, այլ եւ իր մէջ է առնում Խաչակրաց արշաւանքների ժամանակուայ Եդեսիոյ կոմսութիւնը, ուր թագաւորում էր Գի Լուսինեանը: Այս պարագան արժէք ունի, իբրեւ ելակէտ հայոց պատմական ազգայնութեան համար, որը մոռացել է ժողովրդական երգերն ու աւանդութիւնները Վանի եւ Երզրումի, որոնք գաղափարական հիմք են հանդիսանում հայկական անիշխանական–ընկերվարական պրոպագանդին:

Ապա, Փոքր Հայաստանի հայերը կապուած չեն Կովկասի արդիւնաբերական հայութեան հետ եւ, իրօք, շատ քիչ ընդհանուր բան ունին նրանց հետ:

Ես անձնապէս կ'ասէի, որ լաւ կը լինէր, եթէ միայն հնարաւոր է, Մուշի դաշտն էլ մտցնել Ֆրանսական գօտու մէջ, որովհետեւ այդ կ'ազատէր Ռուսաստանը յեղափոխական գործունէութեան օճախից եւ կը կտրէր կովկասեան յեղափոխականների քարոզչութեանը ամենից աւելի ենթակայ շրջաններից մէկը այդ յեղափոխականների գործունէութեան շրջանից:

Այս վերջինը, ի հարկէ, աննշան մանրամասնութիւն է եւ նրա արժանիքներն եւ թերութիւնները պէտք է ուսումնասիրուին քաղաքական եւ զինուորական գործի մասնագէտների կողմից· քաղաքական տեսակէտից աւելի լաւ կը լինէր ռուսական շահերի համար, որ այս շրջանը չլինէր ռուսական, բայց որ դրանուէր ռուսական հակակշռի տակ: Ես կարծում եմ, որ սրանք են մեր երկուայ խօսակցութեամբ յարուցուած դլխաւոր հարցերը»· (158–59):

* * *

Քաղաքական մեծ իմաստութեան պէտք չկայ՝ տեսնելու համար աշխարհակալ Անգլիայի մէկ ճէտի ծրագրի մէջ այն հիմնական տարրերը, որոնք բրիտանական գործակալների շարժիչ ոյժն են հանդիսանում Մերձաւոր ու Հեռաւոր Արեւելքում — ռուսական դրոհի կասեցումը եւ Ռուսաստանին առաւելութիւն տուող ռազմագիտական դծերի գրաւումը (կամ գէթ չեզոքացումը: Սըր Սայքսի համար անհրաժեշտ է եղել ստեղծել հայ կղերականների ու անիշխանական–ընկերվարականների հէքեաթը եւ անիշխանականների ուրուականներով սպառնալով թանձրուղեղ ռուս դիւանագէտներին՝ պատնէշ կանգնեցնել ռուսական արշաւի առջեւ դէպի արեւելք· Փոքր Հայքը՝ Ֆրանսային, որովհետեւ Լեւոն թագաւորը Փարիզում է վախճանուել· Մուշը՝ Ռուսաստանի սահմաններից դուրս, որովհետեւ այնտեղ վտանգաւոր յեղափոխականներ են բոյն դրել, Սըվազը, Տիգրանակերտը, իբրեւ հայկական պատմական քաղաքներ՝ նոյնպէս Ֆրանսային: Եւ այսպիսով, կանգնեցուում է ռուսական յառաջխաղացման դիմաց մի բաւական անառիկ թումբ՝ Տաւրոսեան լեռնաշղթան,— մի ծրագիր, որ հաղար առիթներով ու ձեւերով հե-